ԱՅԼՈՅԵՐ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ILawyer Law Firm
Հայաստան, 0010, Երևան, Մ.Խորենացի 26ա, «Խորենացի» բիզնես պլազա, գրասենյակ 122
հեռ՝ +37412567333, բջջ.՝ +37455567333, +37498567333,, viber: +37455567333
էլ.փոստ՝ info@ilawyer.am, lawyerhakobyan@gmail.com կայք՝ www.ilawyer.am

№ ՀԻ-068/02-26
10.02.2026թ.

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանուն

Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 26-ի N 161-Ա որոշման հիման վրա Գյումրու քաղաքապետի /համայնքի ղեկավարի/ 2003-2018 թվականների թվով քսանչորս որոշումներն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու մասին պահանջներով դատական հայցեր հարուցելու նպատակով ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի և Ա/Ձ Իրինա Հակոբյանի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման գնման N «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-24/24» պայմանագիրը:

Կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով ՀՀ վարչական դատարանում վարույթ ընդունված թիվ ՎԴ/16635/05/24 վարչական գործը (Գյումրու քաղաքապետի 30.05.20062. թիվ 628 որոշման վիճարկման հայց) վերահասցեագրվել է ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.02.2026թ. որոշումամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և սույն թվականի մարտի 12-ին ժամը 12:30-ին նշանակվել է նախնական դատական նիստ:

Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 1-ի թիվ 59-Ա որոշմամբ փաստաբան Իրինա Հակոբյանին ՀՀ վարչական դատարանում հանդես գալու լիազորությունները կիրառելի չեն ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով քննվող քաղաքացիական գործերով և փաստաբան Իրինա Հակոբյանը նշված լիազորագրով չի կարող թիվ ՎԴ/16635/05/24 քաղաքացիական գործի շրջանակներում ներկայացնել Գյումրի համայնքի ավագանու շահերը, այդ թվում և ներկայացնել հայցադիմում, հայցի առարկայի փոփոխություն կատարելու միջնորդություն, ինչպես նաև կատարել որևէ դատավարական գործողություն, այդ թվում՝ ապահովել դատական նիստերին ներկայությունը:

Միաժամանակ խնդրում եմ հաշվի առնել, որ վերը նշված գործերով փաստաբան Իրինա Հակոբյանի կողմից դատական նիստերին մասնակցություն ապահովելը հնարավոր չէ, քանի որ դուրս է ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի և Ա/Ձ Իրինա Հակոբյանի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման գնման N «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-24/24» պայմանագրի առարկայից:

Ուստի խնդրում եմ սույն գրությամբ առաջադրված խնդիրը ներկայացնել ավագանու նիստի քննարկմանը և դրա առնչությամբ կայացված որոշման մասին իրազեկել ինձ:

Կից ներկայացնում եմ դատարանի որոշման լուսապատճենը:

Հարգանքով՝
Փաստաբան Իրինա Հակոբյան

Digitally signed by HAKOBYAN IRINA 7901780371
Date: 2026.02.13 11:42:12 AMT

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ՎԴ/16635/05/24

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2026 թվականի փետրվարի <<09>>-ին (ք. Մարալիկ)

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ նախագահությամբ դատավոր Շ. Նիկողոսյանի, ուսումնասիրելով թիվ ՎԴ/16635/02/24 գործն ըստ հայցի ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու (*այսուհետ նաև՝ Հայցվոր*) ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի *(այսուհետ նաև՝ Պատասխանող)*, երրորդ անձինք՝ ՀՀ կադաստրի կոմիտե, «Արցախբանկ» ՓԲ ընկերություն՝ Գյումրի համայնքի ղեկավարի 30.05.2006 թվականի թիվ 628 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքների վերացման պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու կողմից 30.12.2024 թվականին հայցադիմում է ներկայացվել ՀՀ Վարչական դատարան ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի, երրորդ անձինք՝ ՀՀ կադաստրի կոմիտե, «Արցախբանկ» ՓԲ ընկերություն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 30.05.2006 թվականի թիվ 628 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և որպես հետևանք՝ Գյումրի համայնքի և «Արցախբանկ» ՓԲԸ-ի միջև 28.09.2006 թվականին կնքված հողամասի առուվաճառքի թիվ Ա-284 պայմանագիրը և դրա հիման վրա Սայաթ-Նովա փողոց թիվ 6 հասցեի հողամասի նկատմամբ 02.10.2006 թվականին «Արցախբանկ» ՓԲ ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումով ներկայացվել են նաև միջնորդություններ՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու և փաստաթղթերը դատարանում դեպոնացնելու վերաբերյալ:

ՀՀ վարչական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արմեն Ներսիսյանի 07.01.2025 թվականին որոշում է կայացրել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Նույն որոշմամբ թիվ ՎԴ/16635/05/24 վարչական գործով դատավարության մեջ որպես երրորդ անձինք են ներգրավվել ՀՀ Կադաստրի կոմիտեն և «Արցախբանկ» ՓԲ ընկերությունը, ինչպես նաև հայցվոր կողմի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, բավարարվել է և արգելվել է «Արցախբանկ» ՓԲԸ-ին Գյումրի քաղաքի Սայաթ-Նովայի փողոցի թիվ 6 հասցեի անշարժ գույքի նկատմամբ տնօրինման գործողություններ կատարելը մինչև սույն գործով վերջնական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ վարչական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Արմեն Ներսիսյանի 22.01.2026 թվականին որոշում է կայացրել թիվ ՎԴ/16635/05/24 վարչական գործով պահանջը ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին վերահասցեագրելու մասին:

Սույն գործը ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է 29.01.2026 թվականին, 30.01.2026 թվականին մակագրվել է դատավոր Շ.

Նիկողոսյանին և 02.02.2026 թվականին հանձնվել է դատավոր Շ. Նիկողոսյանի աշխատակազմին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վարույթի գործերով նախնական դատական նիստի անցկացումը պարտադիր է, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործը քննում է պարզեցված վարույթի կարգով կամ կիրառում է արագացված դատաքննություն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նախնական դատական նիստը պետք է հրավիրվի այն նշանակելու մասին որոշման կայացմանը հաջորդող **երեսնօրյա ժամկետում**:

Տվյալ դեպքում սույն գործը ենթակա է քննության ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, ուստի գործը պետք է ընդունել վարույթ և նշանակել նախնական դատական նիստ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 26-րդ հոդվածի 2-րդ մասով, 165-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ՎԴ/16635/05/24 գործն ընդունել վարույթ և նշանակել նախնական դատական նիստ **2026 թվականի մարտի 12-ին՝ ժամը «12:30»-ին**, դատարանում *(ՀՀ, Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198, դատական նիստերի դահլիճ թիվ 1)*:
2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Շ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198, հեռ. (0242) 2-24-48, էլեկտրոնային փոստ՝ maralik@court.am

Գործ թիվ ՎԴ/16635/05/24
Ե-3231/26
<<09>>02 2026թ.

Քաղաքացիական գործով հայցվոր
ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու
ներկայացուցիչ՝ Իրինա Լևոնի Հակոբյանին
/ՀՀ, ք. Երևան, Մ.Խորենացի, 26ա շ., գր.122/

ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) դատավոր Շ.Նիկողոսյանի (այսուհետ՝ Դատավոր) 09.02.2026 թվականի որոշման համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու ընդդեմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի, երրորդ անձինք՝ ՀՀ կադաստրի կոմիտե, «Արցախբանկ» ՓԲ ընկերություն՝ Գյումրի համայնքի ղեկավարի 30.05.2006 թվականի թիվ 628 որոշման առ ոչինչ լինելը ճանաչելու և հետևանքների վերացման պահանջի մասին հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հիմք ընդունելով վերը նշվածը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199 հոդվածով՝ ուղարկվում է Դատարանի՝ քաղաքացիական գործը վարույթ ընդունելու մասին որոշումը:

Ձեզ, ՀՀ քաղաքացիական դատավարության 30-րդ և 31-րդ հոդվածների համաձայն՝ որպես քաղաքացիական դատավարության մասնակից՝ դատավարության **հայցվոր** կողմ, պարզաբանվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածով սահմանված գործին մասնակցող անձանց իրավունքներն ու պարտականությունները.

Վերը նշված հոդվածի համաձայն. Դուք ունեք հետևյալ **իրավունքները**. 1) ծանոթանալու գործի նյութերին, ստանալու դրանց պատճենները, գործի նյութերից անելու քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ. 2) հայտնելու բացարկ. 3) ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտմանը. 4) հարցեր տալու դատավարության մասնակիցներին. 5) միջնորդություններ անելու, ցուցմունքներ տալու դատարանին. 6) դատական նիստի ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնելու ձեր փաստարկները և դիրքորոշումը. 7) գործի քննության ընթացքում դիրքորոշում հայտնելու գործին մասնակցող այլ անձանց միջնորդությունների և փաստարկների վերաբերյալ. 8) բողոքարկելու դատական ակտերը. 9) կատարելու սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված այլ դատավարական գործողություններ:

Դուք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պարտավոր եք Ձեր դատավարական իրավունքներից օգտվել և Ձեր դատավարական պարտականությունները կատարել բարեխղճորեն, իսկ դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվում են չարաշահմանը համաչափ՝ սույն օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաներ կամ օրենքով նախատեսված իրավական ներգործության այլ միջոցներ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի **13-րդ հոդվածի 2-րդ** մասի հիմքով Ձեզ պարզաբանվում է նույն Օրենսգրքի 146-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, մասնավորապես՝ *<<դատական նիստին դատավարության մասնակիցներից որևէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով գործին մասնակցող անձանց կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը նրա բացակայությամբ շարունակելու կամ դատական նիստը հետաձգելու մասին>>*, իսկ 147-րդ հոդվածի համաձայն՝ *<<1. Գործին մասնակցող անձն իրավունք ունի դատարանին խնդրել գործը քննել իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա: 2. Գործին մասնակցող անձն իրավունք ունի դատարանին խնդրել դատական նիստն անցկացնել իր բացակայությամբ: 3. Դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցված գործին մասնակցող անձի չներկայանալը դատական նիստին արգելք չէ գործի քննության համար>>*:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ ***<<1. Առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե՝ ծանուցված հայցվորը (դիմողը) կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել երկու հաջորդական դատական նիստերին և չի ներկայացրել գործի քննությունը***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *<<Հայցադիմումը (դիմումը) վարույթ ընդունելու մասին որոշումը, գործին մասնակցող անձ ներգրավելու որոշումը կամ դատական ծանուցագիրն ստանալու օրվանից, բացառությամբ սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ մասով և 99-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի, գործին մասնակցող անձը հերթական դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ ծանուցվում է դատական իշխանության պաշտոնական կայքում համապատասխան տեղեկությունները տեղադրելու միջոցով: Գործին մասնակցող անձը պարտավոր է ինքնուրույն ձեռնարկել միջոցներ՝ գործով դատական նիստի ժամանակի և վայրի վերաբերյալ դատական իշխանության պաշտոնական կայքից տեղեկություններ ստանալու համար: Նա պարտավոր է գործը քննող դատարանին անհապաղ գրավոր տեղեկացնել դատական իշխանության պաշտոնական կայքից նման տեղեկություններն իրենից անկախ պատճառներով ստանալու անհնարինության մասին: Նման դեպքում դատարանը ծանուցումն իրականացնում է սույն օրենսգրքի 94-րդ հոդվածով նախատեսված այլ եղանակներով, իսկ 6-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգը չի կիրառվում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, ինչպես նաև ազատազրկման վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում գտնվող կամ բուժական հիմնարկում ստացիոնար բուժում ստացող գործին մասնակցող անձանց նկատմամբ>>*, իսկ 98-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *<<դատավարության մասնակիցը պարտավոր է դատարանին հայտնել գործի քննության ընթացքում իր հասցեի, էլեկտրոնային փոստի կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցի փոփոխության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցագիրն ուղարկվում է այն հասցեով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով, որով դատավարության մասնակիցը վերջին անգամ ծանուցվել է, և համարվում է հանձնված, թեկուզև հասցեատերն այն փաստացի չի ստացել>>*:

Դուք տեղեկացվում եք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 165-րդ հոդվածի համաձայն՝ հայցային վարույթի գործերով նախնական դատական նիստի անցկացումը պարտադիր է, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործը քննում է պարզեցված վարույթի կարգով կամ կիրառում է արագացված դատաքննություն, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 166-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը պատասխանողից հայցադիմումի պատասխան ստանալու, իսկ այն չներկայացվելու դեպքում պատասխան ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելու, ինչպես նաև վերադաս դատարանից գործն ստանալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական դատական նիստ նշանակելու վերաբերյալ, որն ուղարկվում է գործին մասնակցող անձանց: Նախնական դատական նիստը պետք է հրավիրվի այն նշանակելու մասին որոշման կայացմանը հաջորդող **երեսնօրյա ժամկետում**:

Միաժամանակ, Դուք տեղեկացվում եք, որ Դատարան ուղարկվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն նույն դատարանի գրասենյակ՝ ***Շիրակի մարզ, ք. Մարալիկ, Հրանտ Շահինյան 198 հասցեով կամ ք. Գյումրի, Անկախության հրապարակ 7:***

Կից՝ *<<Գործը վարույթ ընդունելու և նախնական դատական նիստ նշանակելու մասին>> որոշումը <<01>> թերթից:*

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ՝ ԻԼՅԱ ԱՓՈՅԱՆ